

ՀԱՅՔ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱՂԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAİK

AN ARMENIAN MONTHLY JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.

341 West, 23rd St., New York, N. Y.

Vol. VI, 1896.

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Խմբագրական Նշմարք.— Կեցցէ Բարբա-
րոսութիւն.— Ի՞նչ կը Խորհիք Պաշտօնի Ցոյ-
ցին վրայ.— Օսմանեան Պաշտօնի վրայ յար-
ժակում.— Նամակք Կ. Պոլսէ.— Նամակ Ատա-
նայէն.— Մեր ճերկայ առիթն Ամերիկայում—
Համդէս Ամուրեայի Տրամախոհելու եղանակը.
—Այլևայլք:

ԽՈՐԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Հայաստանի գոյութիւնը շօշափելի
կերպով վտանգուած է: Սուր և ցուր,
սով և ծով մինչև գարուն կը բաւեն, ե-
թէ չարխափան ձեռք մը չժմնէ օգնու-
թեան, չիք անել զհայ ազգն ի Տաճկաս-
տան: Այս թերթը, հռչակելով հանդերձ
Եւրոպական կառավարութեանց յոռեգոյն
քան բարբարոսական վարմունքը մեր ազ-
գին նկատմամբ և մարդասպան Ապաիւրի
ճիւղադութիւնը, պատճառ ունի պնդելու
թէ մեր յեղափոխականներն ալ անգովե-
լի և չափազանց սպառիչ ուղղութեան մը
հետեւած են ու կը հետևին: Ներկայ թու-
ոյ երկու նախօգուածներն կը բացատ-
րեն, թէ և չաա թերախատար կերպով,

ՀԱՅՔԻ Հայեցուածքն: Պէտք չէ որ բա-
րեկարգութիւններու ետեւէն վազենք այն-
պիսի մեթոտով որ ազգին բոլորական ջն-
ջումն տեսնենք: Օսմ. պետութիւնը կոր-
ծանել կրնանք այդ կերպով, բայց մենք
ալ հետը կը կործանինք, նման Սամփսո-
նի որ ահագին շէնքի մը սիւներն սարսե-
լով ինքն ալ փլատակներուն տակ թաղ-
ուեցաւ:

*
* *

Պատմական մեծամեծ դէպքերու ժամն
չափելի հեռաւորութեան մէջ կ'երեւի,
զի Եւրոպիոյ ժողովուրդք, հակառակ ի-
րենց տէրութեանց խաբէութեանն, սկսած
են իմանալ Արևելքի սոսկալի իրողու-
թիւններն: Զարմա՛նք, սակայն, որ Գեր-
մանիոյ կայսրն, որ իւր դեսպանը յետ
կոչել պարտէր, Սուլթանին կը յղէ իւր
լուսանկարն ի նուէր, կոտորածներէն քա-
նի մի օր վերջն, այսինքն մինչ նորա ան-
մեղ զոհերուն արեան հոտն կը բուրէ և
սարսուռ նողկանաց կուտայ ընթանալ Եւ-
րոպիոյ մէկ ծայրէն ցմիւսն... Ո՞ք քան
զո վատթարագոյն է, Համիլթ թէ Կիլյօմ:
Կայսրներու այս կարգի յիմարութիւն-
ներն քաջ հաշուեալ են փութացնելու այն
օրն, երբ բոլոր ժողովուրդք ոտքի պիտի
ելնեն զայրացած, և զկայսրութիւններն
պիտի յեղափոխեն հանրապետութեանց:

ԿՆՅՅԷ

ԲԵՐԲԵՐՈՍՈՒԹԻՒՆ

Հռեցէ՛ք վայրիկ մի, չատախօս՝ կառավարութիւններ, և մտի՛կ արէ՛ք այն ցառմաւոր դատավճռին զոր Հայ ժողովուրդը կ'արձակէ ձեզ դէմ:

Այն թշուառ ու գերի ժողովուրդը որ երկու տարի առաջ ձեր առջեւ ողիկ ողիկ կը լինէր որ ազատէ՛ք զինքը, այսօր՝ արիւնլուայ՝ ստքի կանգնած կը սեւեռէ իւր արհամարհոտ աչքը ձեր վրայ և բոլոր ձայնովը կը կոչէ զձեզ ԲԱՐԲԱՐՈՍ:

Դուք, քաղաքակրթ իշխաններ, ձեր բա՛րձր դիւանագիտութեան շնորհիւ նուիրագործեցիք ուժի իշխանութիւնը իրաւանց վրայ— դուք փառաւորեցիք բարբարոսութիւնը:

Ու դեռ արիւնարբու Ապտիւլի պաշտպան էք դուք, և անոր հետ սեղան նըստած՝ անմեղի արիւն կը խմէք ու նահատակի միս կ'ուտէք:

Մի՛ այլ ևս ժպտի՛ք դուք մեզ ասել թէ մեր այս կամ այն արարքը ձեզ Համակրելի է թէ ոչ: Ձեր Համակրանքը կ'արհամարհենք, ձեր Հակակրանքը կը խոտենք յորմէ հետէ ծանօթ ենք ձեր հոգւոյն ու գիտենք ձեր ճշմարիտ օրհուրը...

Մի՛ յանդգնի՛ք պարսաւել: Հայ յեղափոխականներուն յիմարական արշաւանքը օսմանեան դրամատան վրայ: Այն Հայ «յիմարները» որք փաստի աեղ ուժանակ կը գործածեն և աղօթքի փոխան ռումբ, ձեր տկար աչակերտքն են, ո՛քըրիստոնեայ Պիմարքներ:

Եւ դու, ծովկարօտ Արջ, յսուա՛ջ գնա ճմլելով միլիոն մի մայր ու մանուկ տկար ու անմոռնչ, և թաթախելով վիթխարի թաթերդ նահատակաց արեան մէջ.— հասիր ի ծով, բայց գիտցի՛ր թէ ծովու բոլոր ջրերն յաւիտեան չպիտի բաւեն մաքրել զքեզ արեան արատներէդ...

Ո՛ր Հասարակ ժողովուրդք եւրոպիոյ, վա՛յ տուէ՛ք ձեր իշխաններուն որք ժի՛ղջարու քաղաքակրթութիւնը խայտառակօրէն սնանկացուցին:

Կեցցե՛ն Հայ ցուցարարք, կեցցե՛ն եւրոպիոյ կասերք ու վարիչք, կեցցե՛ր բարբարոսութիւն:

Ի՞ՆՉ ԿԸ ԽՈՐՀԻՔ

ՊԸՆՔԸՑԻ ՅՈՅՑԻՆ ՎՐԱՅ

Օտարականները միաբերան մեղադրեցին Դաշնակցականաց արշաւանքը Օսմ. Պանգային վրայ իբրեւ յիմարական: Ինչպէս ուրիշ ցոյցերու մասին, նոյնպէս և վերջինիս համար գիտեւ տուին թղթակիցք թէ ժողովրդային բարկութեան ինքնաբուխ արտահոսութիւն մը չէր, այլ միայն արուեստական ցոյց մը: Նոյն միջոցին դեսպանաց տրուած յայտարարութեան դէմ բան մը չգրեցին, լռելայն ընդունելով թէ պահանջուած բարեկարգութիւններն բանաւոր էին: Միայն մէկ կէտ մի ամենուն անբանաւոր երեցեր է, այսինքն թէ Հայ յեղափոխականներն ի՞նչ խելքով կրնային յուսալ թէ քանի մը ռումբի ըսպառնալեաց տակ՝ Եւրոպա պիտի բռնադատուէր անել Հայոց համար ինչ որ չուզեց կամ չկրցաւ անել ի տես 100,000 անմեղ զոհերու: Դաշնակցականք ինքեանք միթէ կը հաւատայի՞ն այդմ. չեմ կարծեր: Ուրեմն ի՞նչ կը յուսային թէ պիտի լինէր իրենց ցոյցի բարերար հետեւանքը ազգին համար: Այդ իրենց գաղտնիքն է, բայց քիչ մը բացուած գաղտնիք: Մեր յեղափոխական պետերէն մին՝ Սոսնոյ կոտորածէն առաջ՝ օտարականի մը յայտնած էր այդ գաղտնիքը— թէ ցոյցը կոտորած կը ծնի, և կոտորածը եւրոպական միջամտութիւն: Վերջին ցոյցին շառժառիթն ալ այդ կը թուի լինիլ:

Ինչ է Հայ ժողովրդեան կարծիքը այդ քաղաքականութեան մասին, այսինքն ջարդերու շնորհիւ բարեկարգութիւն ձեռք բերելու քաղաքականութեան: Եւ ջարդուողներն Հայերն են միայն, և կը ջարդուին ահագին թուով: Բառերուն բուն իմաստը նկատեցէ՛ր. ջարդ կայ, ոչ թէ պատերազմ. զի ցոյց է եղածը, ոչ թէ յեղափոխութիւն: Ոչ զէնք կայ, ոչ կարեւոր դիմադրութիւն մեր կողմէն: Ոչխարի պէս, ամենախեղճ ու ամենանախատական կերպով կը մորթուինք:

Նորէն կը հարցնեմ, ինչ է ազգին կարծիքը այս ցոյցերու մասին: Հիմա որ

տեսնուեցաւ թէ ցոյցերը կոտորած յառաջ կը բերեն, և ոտակալի Համեմատութեամբք, բայց կոտորածները եւրոպական միջամտութիւն չեն պատճառեր, կամ կը պատճառեն յաւէտ կոտորիչներուն ի նպաստ միջամտութիւն քան թէ կոտորեալներուն, ժողովրդի միտքը կը բացուի չափով մը ըմբռնելու թէ ցուցարարներուն հաշիւը սխալ էր: Կը կարծենք թէ Հայաստանի բոլոր գաւառներուն մէջ Հայ ժողովուրդը սաստիկ դժգոհ է մեր Հնչակեան, Դաշնակցական և այլ ցուցարարներէն: Միայն արտասահմանի մէջ, ջարդերու սահմաններէն դուրս, սրճարաններու անկիւնները հանգիստ նստած հայրենասէրներն, որք իրենք զիրենք այսինչեան կամ այնինչեան կը կոչեն, կը պնդեն տակաւին զարմանալի ինքնահաւանութեամբ թէ ցոյցը, կամ իրենց յաւակնուտ բայց սխալ բառովը՝ յեղափոխութիւնը, հարկաւոր է:

Այս թերթը Յուլիսի թուով պարզած էր թէ քանի որ Եւրոպա յայտնապէս դժկամակ է արեւելեան խնդիրը այս միջոցիս լուծելու, մենք չենք կրնար մեր տկար, չնչին ուժովն բռնադատել զինքը որ փութայ: Կրեւէյի մասին ցոյց տրուած պաղութիւնն ալ մեզի թարմ ազգարարութիւն մ'էր: Մեր քաղաքականութիւնը պէտք է լինէր «հանդուրտ կենալ», ցոյցէ զգուշանալ, զօրութիւն պատրաստել ապագային համար, կերակրել մեր անօթիները, չոր կոտորածոց վտանգը ամենայն խոհեմութեամբ հեռացնել որքան հնար է, և սպասել որ ժամանակը մեզի օգնութեան ժմէր, և պիտի ժմէր առանց երկար յամելու, զի Թուրքիոյ իրաց վիճակը չէր կրնար ընդունիլ երկար յետաձգում:

Բայց մեր Դաշնակցական եղբայրները կ'ենային անհամբերութեամբ, կ'ուզէին թերեւս Հնչակեանց հետ բաղդատուիլ, և արին իրենց ռումբերու և տինամիթի գող ցոյցը, և ցոյց մեծածախս, որուն զոհ գնացին անմիջապէս 10,000 Հայեր, և գաւառներում չգիտեմք զեռ ուր պիտի հասնի թիւը:

Մեր ցուցարարները մի կարեւոր բան կը մոռնան, այսինքն թէ իրենք Հայ ժողովրդի օրինական ներկայացուցիչները չեն: Ազգը իրեն քուէովը պաշտօն չէ տուեր ոչ Հնչակեանց և ոչ Դաշնակցականաց խմբին: Դռքա կը գործեն իրենք իրենցմով, իրենց ազատ կամօք և խելքով,

բայց, կէտ ահագին, իրենց արարքներուն հետեանքները ամբողջ ազգին վրայ կը ծանրանան և կը ճմլեն զայն մահու չափ:

Պարոն ցուցարարները ազգը ազատելու կամ սպաննելու ահագին պաշտօնը ստանձնեալ են, և սակայն ուրիշ ազգերու պաշտօնէից պէս չեն որ ժողովուրդը կարենայ իւր քուէով պաշտօնանկ անել զանոնք երբ կը տեսնէ անոնց սոսկալի անյաջողութիւնը կամ մահացու սխալները:

Երբ 1756ին անգլիացի հրամանատար Պիլինկի նաւատորմիղն Փռանսացուցմէ յաղթուեցաւ չարաչար, Անգլիա խորհեցաւ թէ հրամանատարութեան մէջ անընդունակութիւնը ոճրի մը հաւասար էր, և Պիլինկի հրացանի բռնուեցաւ իւր նաւուն վրայ:

Անյաջող զօրավարն և նախարարները պաշտօնանկ կը լինին, աստիճանէ կը զրկուին, հրացանի կը բռնուին՝ ըստ իրենց յանցաւորութեան աստիճանին, թէև օրինական կերպով իրենց յանձնուած է պաշտօնը, և յանձնողին քով ալ քիչ մը յանցանք կայ:

Իսկ մեր յեղափոխական կամ ցուցարար պետերը ազգէն պաշտօն առած չեն, բայց ազգին կեանքը իրենց անընդունակ ձեռաց մէջ է, և մենք ալ անկարող ենք զիրենք պաշտօնէ ձգել:

Մի՞թէ ԱՊՊ, Փռանսական յեղափոխութեան սքանչելի առաջնորդը, երբ տեսաւ յեղափոխական գործին վիթման վրտանգը խօլ կողմնակցութիւններու (factions) երեսէն, զարմանալի քաջութեամբ սկսաւ աղաղակել թէ «չուզեր ինքը աշխատած լինիլ լոկ մեծ կործանման մը համար»: Մեք Միւսապօ մը չունինք, բայց Հնչակ կը թուի ըմբռնած լինիլ ցոյցերու մահացու վտանգաւորութիւնը, իսկ Դաշնակցականք իրենց հաշուոյն նոր փորձերու կը ձեռնարկեն— իբրեւ բարկացած կամ ցուցամօլ տղայ մը որ կը փորձէ մրցիլ հսկայի մը հետ, հսկաներո՞ւ հետ— զի յայտնի է թէ մեծագոյն ոյժեր կան Թըրքին ետև պահուած ու զթուրքը պաշտպանող:

Թէ ազգը ինչպէս կը դատէ այս ցոյցերու քաղաքականութիւնը, ինձ անկ չէ վճռապէս ասել. ես մի բան կարող եմ վճռապէս ասել իմ կողմանէ, թէև ամբողջ ազգին մէջ մինակ լինիմ այս մասին— ես, ՀԱՅՔԻ խմբագիրս, կը դատա-

պարտեմ այդ քաղաքականութիւնը իրրե սխալ և իբրե անվայել. և կը յայտարարեմ թէ, մինչև անգամ եթէ յաջողէր, դարձեալ պիտի դատապարտէի, զի չար միջոցներով բարի նպատակի ծառայելու սկզբունքը— կոտորած պատճառելով բարեկարգութեան հասնելու մեթոտը— յաւիտեանս յաւիտենից սխալ է:

Տէրութեանց մէջ բնաւ բարեկամ չունինք, զայդ գիտնալով՝ պէտք էր ծայրագոյն լիմաստութեամբ վարուէիմք, բայց վարուեցանք խօլ յանդգնութեամբ: Մեր այս անհուն աղէտները ու բոլորական ջնջման վտանգը ըստ մասին մեր անխելքութեան կը պարտինք:

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՆԳՍԵՆ ՎՐԱՅ

ՅԱՐԱՎԱՅԻՄ

(1. Թայմզէն)

Դրամատան պաշտօնեաներէն մին որ ականատես էր բոլոր անցիցն և որ յարձակողաց պետին հետ երկարօրէն խօսակցելու առիթ ունեցած էր, կը գրէ հետեւեալը:—

Յարձակող խումբը 60 հոգիէ կը բաղկանար, որք կողմնակի փողոցներէ քալելով պանգային մօտեցած էին չորս փոքր խմբակներու բաժնուած: Առաջնորդներէն երկուքը յառաջագոյն մտած էին ի դրամատունն իբր թէ գործի համար, որպէս զի անգամ մը աչքէ անցնէին տեղը, և երրորդ մը դրուած էր սանդուխին գլուխը: Տեսնելով թէ մուտքը բաց էր, նըշան մը կուտան դուրսը կեցած ընկերներուն, որոց հինգը կամ աւելին՝ բեռնակրի տարազով հագուած, ներս կը մտնեն, կրելով դրամի սովորական տուպակներ՝ լեցուն ... ռումբերով, ուժանակով և ուժանակի փամփուշներով: Այս տուպակներուն մէկը վար կը դնեն գետնայարկին վրայ՝ դրամապանին մերձ, երկու հատ ալ ստորնագոյն յարկը: Կասկածելի անձի մը կալանաւորումը ի ձեռն դրամատան բեռնակրաց՝ կը պարտաւորէ զառաջնորդն տալ յարձակման նշանը վաղաժամ՝ սուլելով, և դուրսը եղող յեղափոխականները, որ իբր թէ անկէ կ'անցնէին պատահար, ներս կը խու-

ժեն: Ի խուժելն՝ նախ կը սպաննեն դրան երկու պահապան զինուորներն. իբր 30ը կը յաջողին ներս մտնել, բայց զոհ տալով իրենց գլխաւոր առաջնորդն և քերկու ընկեր:

Միանգամ ներս մտած՝ ալ փակեցին դռներն և սկսան թիփօլէրներ պարպել ամեն կողմ և ռումբեր նետել պատուհանէն դուրս որպէս զի պանգային պաշտօնեայք զարհուրելով անձնատուր լինէին և որ դրսէն ոստիկանք չհամարձակէին փութորկել զդռն: Ընդ վստահանալն թէ պանգան իրենց ձեռքն էր, ներսէն ամբողջութիւն դռնն դրամով լեցուն տուպակներ դնելով ետեւ:

Դրամատան պաշտօնէից սարսափը աննկարագրելի էր, ամենն ալ գետին փռուեցան որպէս զի պատուհանէն մտնող գնդակներն իրենց չդպչէին: Յեղափոխականք յայտարարեցին թէ իրենց փնտս չը պիտի անէին եթէ հանդարտ մնային: Իրենց նպատակը քաղաքական էր, ասին, և կը մարտնչէին հայկական դատին համար: Ապստամբները կարեւոր կետերու վրայ տեղաւորուեցան իրենց ռումբերու դէպքերով մէկտեղ, իսկ երկու պետերն ժուռ կուգային հրամաններ տալով, սիրտ դնելով իրենց մարդոց, և ապահովցնելով դրամատան պաշտօնեաները:

Մինչ այս այսպէս, զինուորները չէին դադարիր դրսէն գնտակ արձակելէ, և ամբողջ ժամ մը ոչ ոք կարող էր պատուհաններուն մօտենալ:

Վերջապէս Հայ առաջնորդներն բանաձեւեցին իրենց պահանջները: Նոքա կ'ուզէին հայ բանտարկելոց արձակումը, և Եւրոպական պետութեանց երաշխիքը թէ բարեկարգութիւնները ի գործ պիտի դրուէին: Եթէ այս պահանջներն չյնորհուէին երկու աւուր մէջ, օգը պիտի հանէին զդրամատունն իւր բոլոր պարունակութեամբ՝ դրամական թէ մարդկային: Ասոր վրայ մեր երկու պատուիրակաց թոյլ տրուեցաւ մեկնիլ, որք թողուցին զպանքան ժամ 3.45ին: Յարձակումն սկսած էր ժամ 1.30ին: Եւ փոխադարձ հաւանութեամբ թշնամութիւնք դադրեցան ընդ մէջ յեղափոխականաց և զօրացն: Յայնժամ զօրաց հրամանատարն խնդրեց մենէ դուրս ելնել, և մեք նմա հասկցուցինք թէ անկարելի էր, ըստ որում Հայերուն բացարձակ իշխանութեան ներքե կը գտնուէինք,

և աղաչեցինք իրմէ որ իւրայնոց թոյլ չը տար գնդակ արձակել ներս, քանզի Հայերը կը սպառնային մեզի եթէ զօրքը հանդարտ չմնային:

Յայնժամ բազդատական հանդարտութենէն օգտուելով՝ Հայերն կատարեւագործեցին իրենց գործողութեանց ծրագիրն, և այնքան քաջ որ յայտնի է թէ յառաջագոյն լաւ ուսումնասիրած էին դրամատան յատակագիծն:

Վերջապէս, ժամ 11ին, ձգտումը մեզմացաւ մեր պատուիրակաց վերադառնալովը: Նոցա կ'ընկերանային Սըր Էտկար Վինսընթ՝ դրամատան կառավարիչ, Պրն. Մաքսիմֆ՝ ռուսական դեսպանատան առաջին քարտուղար, և Սուլթանին մէկ թիկնապահն: Բանակցութիւնք իսկոյն ըսկսուեցան յեղափոխականաց պետերուն հետ, որք երեցան ի պատուհան մը երկրորդ հարկին վրայ, ընկալելու կրելով ի մի ձեռին և ուսմբ ի միւս ձեռին:

Պրն. Մաքսիմֆ խօսեցաւ անոնց և ասաւ թէ Սուլթանէն արտօնութիւն ստացած էր շնորհել իրենց ներում և ազատելք երկուէն՝ եթէ ձեռնթափ լինէին դրամատանէն:

Առաջնորդներն պատասխան տուին թէ այդ վնաս չունէր, բայց իրենք աւելին կ'ուզէին— բոլոր Հայոց ազատութիւնը, և առ այս՝ տէրութեանց երաշխաւորութիւնը, եթէ ոչ պիտի զդրամատունն ու պատանդներն, թուով 140, օդն հանէին:

Յայնժամ Մաքսիմֆ պերճաբան ճառ մը խօսեցաւ, ասելով թէ Սուլթանէն և դեսպաններէն արտօնութիւն ունէր ինքը շնորհել իրենց կեանքը այդ գիշեր, բայց չէր կարող ինչ և իցէ բան երաշխաւորել յաջորդ առտուան համար: Ի մասին միւս պահանջներուն սաչափ կրնար ասել թէ, թէպէտ արի և զիւցազնական էին, բայց որովհետեւ զպանքան զինու զօրութեամբ բռնած ունէին, քաղաքակրթութեան շըրջանէն դուրս դրած էին իրենք զիրենք, և ինքը, իբրև ներկայացուցիչ տէրութեանց, չէր կրնար բարենորոգմանց մասին բանակցիլ: Գալով իրենց սպառնալիքին թէ զպանքան օքը պիտի հանէին և որով պիտի սպաննէին հարիւր անմեղ մարդիկ, այդպիսի գործողութիւն մը իրենց դատը յառաջ տանելու չէր կըրնար ծառայել, այլ, ընդհակառակն,

պիտի ուժացնէր բոլոր Եւրոպիոյ համակրանքը: Եւ եւս, իրենք իրաւունք չունէին իրենց կեանքը զոհել, քանզի ցոյց տուեր էին թէ իրենք ճարտար, կարող մարդիկ էին, որոց կորուստը անգարմանելի պիտի լինէր իրենց հայրենակիցներուն համար: Բանակցութիւնը տեւեց երեք ժամ: Վերջապէս պետերը կայանք մը տուին: Առաւօտեան ժամ երկուք ու կիսուն՝ առաջնորդք սուլեցին իրենց սուլիչներն և յեղափոխականք թողլով իրենց առանձին կայաններն, ժողովեցան առաջին յարկին վրայ, բերելով իրենց վիրաւոր ընկերներն որք պիտի տարուէին ռուսական հիւանդանոցը: Ապա դուրս ելան դրամատանէն, ըստ համաձայնութեան, ապահով ընկերութեամբ երթալու Սըր Վինսընթի զբօսանաւն: Յետոյ ոստիկանները մտան ի դրամատունն և մեք ազատ եղանք՝ 13 ժամու մահատիպ տագնապ մը կրեւէ գլխի:

Արմէնոյ Կարոյ և Հրաչեայ, երկու պետերն, Թուրքիայէն հեռանալէ յետոյ տուած են հետեւեալ տեղեկութիւնները:

Հետեւեալ օրը, ժամ 4.30ին, Փռանսական, անգլիական և ռուսական դեսպանատանց թարգմաններն, Սըր Վինսընթին հետ, զբօսանաւն եկան: Հաշտարարութեան և, կրնանք ասել, շողոքորթութեան (զի առաջ դիւցազն ալ կոչեցին զմեզ) եղանակը նախատականի փոխուած էր: մեզի ասին թէ «իշութիւն մը» (une betise) գործած էինք, և թէ մեր «խօս» արարքը վտանգի տակ ձգեր էր Սուլթանէն ստացուելու բարեկարգութիւնները: Այսչափ ասել կը բաւէ Ռուսի մը պատուոյ խօսքին վրայ: Մինչ այս կատակերգութիւնը տեղի կ'ունենար Կիւլնարի վըրայ, մեր հայրենակիցներն ոչխարի պէս կը մորթուէին մայրաքաղաքին և սրուարձանաց մէջ, հակառակ Սուլթանին խոստմանց: Ժամ 5ին ի Ժիռոնտ շոգենաւը առաջնորդեցին զմեզ, և Սըր Է. Վինսընթ ամեն մէկուս 5ական լիրա տուաւ ճանապարհածախսի համար: (Ի Ժիռոնտ, Սեպտեմբեր 1):

ՆԱԽԵԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Օգ. 19, 1896

Աւելորդ իսկ է ըսել թէ՛ Բարդողիմէոսի պատրիարքական տեղապահութեան ընտրութիւնն ընդհուպ վաւերացուց կայսերական կառավարութիւնն: Օգ. 11ին Նուրեան իրեններուն ընկերակցութեամբ իրրեւ պատրիարքարանի կողմանէ պատուիրակութիւն մը՝ (ինքնակոչ) գնաց ի Նշան թաղ Բարդողիմէոսի բնակարանն և զայն հրաւիրեց ի պատրիարքարան: Բարդողիմէոս ազօթք ըրաւ Մայր Եկեղեցւոյ մէջ վասն արեւշատութեան Սուլթանին: Քարող խօսեցաւ անդ ջանալով արդարացեալ մինչև ցարդ իւր բռնած քաղաքականութիւնն, խոստացաւ նպաստաւոր լինիլ իր ազգին շնորհիւ Սուլթանի և գնաց բազմիւ պատրիարքական աթոռի վրայ՝ որոյ ախմ կը քաշէր այնչափ ժամանակէ ի վեր: Նոյն օրն իսկ ընկերակցութեամբ Նուրեանի և նմաններու՝ գնաց յայցելութիւն շնորհակալութեան ի Բ. Դուռն Մեծ Եպարքոսին և դատական ու կրօնական գործոց նախարարին:

Յաջորդ օրն (12 Օգ.) Գերագոյն ժողովն գումարուեցաւ ի Պատրիարքարան և անդ կարդացուեցաւ Բարդողիմէոսի ընտրութեան պուեռըութիւնն և որոշուեցաւ յառաջիկայ կիրակէէ սկսեալ Բարդողիմէոսն յիշել ի պատարագի իբրեւ պատրիարքական տեղապահ: Հարկ է դիտել տալ թէ ցարդ երբէք պատրիարքական տեղապահներն յիշուած չեն և մինչ ցընտրութիւն պատրիարքի հրաժարեալ կամ վախճանեալ Պատրիարքի անունն կը յիշատակուէր:

Նոյն օրն Մատթէոս Իզմիրլեան թողուց իւր Հիսար Տիպիի բնակարանն և գնաց բնակիլ յԻւսիլիտար: Աշըգեան և Ալէաթճեան եպիսկոպոսունք յայցելութիւն շնորհաւորութեան եկան Բարդողիմէոսի: Ալէաթճեանի այս փութկոտութիւնն կը քննադատուի աստ:

Ուրբաթ օրն (14 Օգոստոս) Բարդողիմէոս իրեններովն գնաց ի Կայսերական Պալատ, յետ Սեւմէլըգի արարողութեան ընդունուեցաւ Սուլթանէն, անդ կարդաց

մի ուղերձ՝ որ Աստուածապայել ածականներով ճոխացեալ էր. ի պատասխանի Սուլթանին գոհունակութեան, կրկին խօսեցաւ յայտնելով ազգին շնորհակալութիւններն և երախտագիտական զգացումներն (անշուշտ հարկւր հաւարաւորաց ջարդին համար) ևն: Յաջորդ օրն՝ Նուրեան՝ իւր գերագոյն ժողովոյ մի քանի ընկերակիցներով գնաց ի պալատ յայտնել իրենց ջերմագին շնորհակալութիւններն ազգին բաղդն իրենց յանձնուած ըլլալուն:

Կիրակէ օրն պատրիարքական շրջաբերական կարդացուեցաւ յեկեղեցիս Կ. Պոլսոյ և Բարդողիմէոսի անունն յիշուեցաւ ի պատարագի: Գրեթէ բոլոր եկեղեցիներն այս յիշողութեան առթիւ ժողովուրդն եկեղեցիներէն դուրս ելաւ, Ղաւթիոյ եկեղեցւոյ մէջ «չպիտի յիշուի» աղալակներ բարձրացան: Եկեղեցիներն լրատեններով լիքն էին:

Սուլթանն որ չհաճեցաւ ազգին սիրելի և անձնուէր Իզմիրլեանն պատուել որ և է չքանչանով՝ փութաց իւր ընտրած տեղապահն մեծարել Մէճիսիյէի Ա. աստիճանն նշանով. նոյն չքանչանի Բ. աստիճանն տուաւ Ա. Պոլսոյ նախկին առաջնորդ և իւր վատ ընթացքով հանրածանօթ Մետրոպոլիտանիոսին. Գ. աստիճան Բարդողիմէոսի աշակերտ Արիստակէս վարդապետին և Երուսաղիմայ Պատրիարքական փոխանորդ Երէցեան վարդապետին. Դ. աստիճան իւր անձնական քարտուղար Ագնիւ անուն անձին: Հայր Երէցեան ի շարժ վատագունից դատուած է, ոչ թէ ի նշան համակրութեան՝ այլ զայն շահասիրելու և ազգին աչքին փոշի փչելու համար: Արարահամ Ֆրէնկեան, Պատրիարքարանի վատ և թրքամոլ գործակալն, արժանացաւ ուլաի աստիճանին: Կըսուի թէ Բարդողիմէոսի տունն պահուած կիներն՝ Շաֆաթիի նշան պիտի ընդունին ի մօտոյ:

Առ այժմ ժողովուրդն համբերութեամբ պիտի սպասէ երկու ամիսներ, և եթէ այդ ժամանակամիջոցին մէջ ըստ Սահմանադրութեան օրինաց Պատրիարքի ընտրութիւնն տեղի չունենայ՝ հաւանականաբար պիտի յուզուի:

Օգ. 16ի երեկոյեան և յաջորդ օրն առաւօտուն՝ շուրջ 1000 Համիսիյէ հեծեալ զօրքեր հասան աստ, գնացին կերակրուեցան ի կայսերական սպալատ և անդ իրր նուէր դաշոյներ և ասորձանակներ ընդու-

նեցին և հաստատուեցան էյուպի կողմն զօրանոց մը: Համիտիյէ հեծելազօրերն՝ քինուորական կրթութենէ զուրկ վայրենիներ են: Ըստ ոմանց սոքա Մակեդոնիա պիտի զրկուին, ըստ այլոց՝ ի կրետէ անդ խռովութիւններն հանդարտեցնելու համար, ըստ ուրիշներու՝ աստ պիտի պահուին և ի հարկին տեղական յուզմանց առաջն առնելու պիտի ծառայեն: Եստիքն խլրտմանց առթիւ Հայեր՝ ջարդել տալու պիտի գործածեն:

Գարակէօզեան ընտանեաց պետն հաճի Գրիգոր, որ ծանօթ է իւր ազահութեամբ, Բարդողիմէոսի զրկած է հարիւր օսմ. ոսկւոյ նուէր մը. անշուշտ շնորհիւ Սուլթանընտիր պատրիարքական տեղապահի՝ իւր եղբոր շուրջ 100,000 ոսկւոյ կտակն անվաւեր համարել տալով մարսելու համար:

* *

Կ. Պոլիս, 25 Օգ. 1896

Բարդողիմէոսի պատրիարքարան մուտքէն ի վեր Հայերն չեն յաճախեր անդ. նոյն իսկ պաշտօնական գործառնութեանց համար պատրիարքարանի պէտք ունեցողք չեն գիմեր այդ ազգային հաստատութեան՝ զի ազգային ըլլալէ դադրած է: Իզմիրեանի աւուրց ժիր գործունէութեան յաջորդած է մեռելական անգործութիւն մը: Ազգային սնտուկն դատարկ է և անկարող իսկ ստորակարգ պաշտօնէից ամսականներու վճարման: Բարդողիմէոս պատրիարքարան անցուցած ժամերուն՝ Սուլթանի համար ուղերձներ և աղօթքներ խմբագրել տալու կ'աշխատի: Վերջերս մեծ բարեփոխութիւն մը մըտցնել որոշեց պատրիարքարանի մէջ և այն է ոսկեզօծ թուրիս մը դնել տալ իւր գահի գլուխն, որոյ համար պահանջեալ 30 ոսկւոյ գումարն չկրնալով հայթայթել՝ աւելի ատան մը շինել տալու հարկադրուեցաւ:

Անգգան Բարդողիմէոս զգաց կարծես թէ իւրյամենուստ լքեալ և առանձնացեալ մնալն անարգանգ մ'է իրեն համար: Սորհեցաւ իրեն շրջապատ մը կազմել, ուստի և շատերու լուր զրկեց որպէս զի երթան տեսակցին իրեն հետ. ամեն կողմէ մերժման և նոյն իսկ անարգական պա-

տասխաններ ընդունեց: Կամեցաւ իւր գործունէութեամբ համակիրներ չահլի, ձայնն հասած տեղն լուր հասցուց թէ ազգին համար մեծ շնորհքներ ձեռք պիտի ձգէ, և յիրագործութիւն իւր խոստման օրերով կայսերական Պալատն անցուց, աղօթելով և աղերսելով, և վերջապէս ձեռք ձգեց ինչ ինչ որոշումներ, զորս իրեն նման ապուշներն շնորհ կ'անուանեն և որք են—

Ա. գաւառացի ազգայնոց զինուորակառն տուրքէ երկու տարի ազատ թողուիլը: Շնորհ իսկ չեմք կարող անուանել զայդ, քանի որ արդէն ըստ օրինի անկարող են՝ պահանջելի չէ, և թէ ազգայինք արդէն չքաւորութեամբ խոտ ուտելու դատապարտուած են: Բարդողիմէոս արից մասին ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլար՝ եթէ գոնէ կառավարութեան Երուսաղէմայ պարտուց համար ազգէն 13 տարիներէ ի վեր հաւաքած գումարն ազգին դարձնել տար, և վերջ տալ տար այդ պատրուակաւ կառավարութեան մինչեւ ցարդ հաւաքած ապօրէն տուրքին, զի ազգն այդ պարտուց մի քանի անգամն վըճարեց կառավարութեան, բայց նա մի դոյզն մասն հատոյց միայն, և կը շարունակէ կեղեքել Ժողովուրդն:

Բ. Հեռագրեր տուաւ Սուլթանն հայաբնակ գաւառաց կուսակալաց որպէսզի Հայոց վճար չհասնի: Այս հեռագիրն ցոյց տայ թէ՝ ֆլաս կը հասցնեն եղեր Հայոց: Կըրկին այդ Սուլթանը չէ՞ր որ հեռագրաւ ջարդի հրաման տուաւ, և ո՞վ կ'ըսէ թէ միւս կողմանէ տարբեր հրաման մը չտուաւ: Գործնական արդիւնքի կսպասեմք. մենք կը կասկածինք իրողգործմանը, զի քաջ գիտեմք թէ Համիտ ուխտած է բռնաջինջ ընել հայ տարին:

Ի փոխարէն այս երկու անուանական շնորհաց Բարդողիմէոս Սուլթանին նուիրած է Պէշիկթաշի գերեզմանատունն: Կարծես թէ իւրն էր այդ ազգային հողն՝ զոր ազգն չէր հաճած հակառակ Սուլթանի հրամանին և մեծամեծ խոստմանց նմա յանձնել: Այս առաջին անգամն է որ Սուլթան մը կ'իշխէ մեր եկեղեցւոյ կրօնի յատուկ մի հաստատութեան վրայ, և այդ ալ արդէն Բարդողիմէոսի նման վատի մը օրովն կրնար ըլլալ:

Նուրեան ալ միայնակ մնացած է, Կառավարական հայ պաշտօնականներն ալ ըս-

կսած են հեռանալ անկէ, և նոյն իսկ գերագոյն ժողովոյ իւր ընկերներն, բայց նա կը գործէ Սուլթանի համակրութիւնն վաստկելու համար, այդ է արդէն իւր նպատակ, և առ այդ քաջալերուեցաւ ալ վերջերս ընդունելով Օսմանիէի Ա. սուրհմանի շքանշանն:

Արբազամ փաշան ալ ստացաւ իւր վարձքն ընդունելով Լիազաթի ոսկի շքանշանն:

Մելքիսէդէք Սրբազան սկսած է ներկայ գտնուիլ գերագոյն ժողովոյ նստից, և կարծես ուղղամտօրէն գործել կը փորձէ:

Իզմիրլեան Սրբազան իւր Իւսկիւտարի բնակարանն առանձնացած է. շատեր կը փախաքին երթալ մխիթարել և յայտնել իրենց անխախտելի համակրանքն, այլ քիչեր կրնան, զի դրան առջեւ Լրտեսք կ'սպասեն և այցելողներու անունն կը գրեն և կը հաղորդեն ոստիկանութեան: Սուլթանը կամք յայտնած է որ Իզմիրլեան Երուսաղէմ երթայ և 3,000 դահկանի ամսական մը յատկացուի: Դեռ այս կամքն հրամանի վերածուած չէ ուստի և փոփոխութեան ենթակայ է:

Այս օրերս կրկին շատ ձեռքակալութիւններ կ'ըլլան:

Կ'ըսուի թէ՝ Սուլթանի գահակալութեան տարեդարձի առթիւ հայ բանտարկելոց ամեն անոնք որ՝ երկու տարուսն և նուազ ժամանակի համար դատապարտուած են ազատ պիտի արձակուին:

Վաղը Դրօշակեանց կողմանէ ցոյց մը կ'ըսպասուի:

Կ. Պոլիս, Օգ. 27, 1896

Սպասուած ցոյցն տեղի ունեցաւ երէկ, որոյ յաջորդեց ջարդ և աւառառութիւնք. ամեն ոք տուններն ապաստանած է, փողոցներն հայու որսորդներ կը շրջին զէն ի ձեռին: Հաղորդակցութիւնք խըզեալ են, ուստի և տեղեկութիւնք թերի պիտի ըլլան:

Երէկ կէս օրէն վերջ լաւ հազուած մի քանի հայ երիտասարդներ Օսմանեան Դրամատունն կ'երթան, որոց կը հետևին չուրջ 30 այլ երիտասարդք պայթուցիկ ուժանակներու և վառօդի մեծ պաշարով մը, սպաննելով զիմադրող դռնապաններն

ուժանակաց պայթմամբ: Պաշտօնեայք կը սարսափին, Հայ երիտասարդք կ'ապահովցնեն թէ գողեր չեն, դրամի պէտք չունին, թէ հոն պիտի մնան իրենց հետ և խուժող թուրք ամբոյն սլտի սպաննեն: Պաշտօնեայք մասամբ կը հանդարտին, Հայերն կը տիրեն դրամատան և քովի Րէժիի պաշտօնատան: Ոստիկանութիւնն կը փորձէ ներս մտնել, պայթուցիկներու արձակմամբ կը Պեստուին և կը վանուին, զօրքերն կը հասնին և անոնք ալ միևնոյն կերպով կը սրտկուին: Զինուորներ հրացան կը պարպեն, մերայինք ուժանակու կը պատասխանեն և լեղապատառ կ'ընեն զայնս օդն թնդացնելով: Ոստիկանութիւն, զինուորութիւն փողոցն կ'ըսպասեն: Տընօրէնն Սըր Էտկար բանակցութեան կը մտնէ, սոքա կ'ըսեն թէ «կամիմք Անդդիական շողենաւով մը Անգլիա երթալ, թէ թուրքերն զիրենք ազատ թողլու են երկրէն դուրս ելնելու անվտանգ, առ այս հարկ է որ՝ դուք ստորագրութիւն տաք և մեր ապահով ելքն խոստանաք: Հակառակ պարագային կարող եմք մեր ունեցած ուժանակի պաշարով ամբողջ դրամատունն և դրացի շէնքերն օդն հանել:» Մինչդեռ ի բանակցութեան էին Անգլիոյ դեսպանական գործակալն կը հասնի, կ'որոշուի որ Սըր Էտկար պալատ երթալով հաղորդէ իրաց վիճակն և Հայ երիտասարդաց առաջարկն: Սուլթանն կը հաճի և կուտայ պատուոյ խոստում, Սըր Էտկար դրամատուն դռնալով պահանջեալ ստորագրութիւնը կուտայ և Հայ երիտասարդաց ընկերակցութեամբ կէս գիշերի մօտ, (որք իրենց զէնքերն և ուժանակներն ի ձեռին ունէին), կը տանի իւր անձնական մուղն կը դնէ զայնս և անոր միջոցաւ Կիւլնար անգլիական շողենաւն կ'առաջնորդէ, որ արշալոյսին դէպ Անգլիա ճամբայ կեւնէ: Ոստիկանութիւնն ի գիշերայն կը խուզարկէ դրամատունն և անդ կը գտնէ աւելի քան 25 հօխա վառօդ և ուժանակի մեծ պաշար մը:

ՋԱՐԴԻ ԵՒ ԱԻՍԻԻ ՀՐԱՄԱՆ: Հազիւ Հայք պանդային տիրած էին, ոստիկանութիւնն կը գրգռէ թուրք խուժանն և մասնաւորապէս Բիւրդերն, կը զինէ զայնս զէնքերով և գաւազաններով և հրաման կուտայ ջարդել Հայերն և աւարի առնել անոնց ստացուածքն: Հրամանին կ'ունին դուրս և գործադրութեան վրայ է ցարդ:

ԳԱՐԱԳԻԻՂ: Ականատես մը կը պատմէ հետեւեալն— «Ժամը երկուքին ատենները (ը. Ե.) շուրջ 300 փաթթոցաւորներ գաւազաններ ի ձեռին Գարագիւղի հրապարակն հասան, և սկսան հասած Հայն սպաննել: Ի տես այս խուժանին ապաստանեցայ... անդ անցուցի ողջոյն գիշերը և անտի դիտեցի թէ՛ այդ ամբոխն երթալով ստուարացաւ, զինուորականներ սուսերամերկ սկսան հրաման տալ և ջարդել Հայերն, ապա յարձակեցան խանութներու վրայ կոտորեցին, բացին ու պարպեցին, երեկոյեան սկսան յարձակիլ խաներուն վրայ, բացին Բիւշիւք Միլլէթ Խանն, Ալիքսիատիս Խանն և դրացի փոքր Խանն, կողոպտեցին սենեակներն և գիշերն ի բուն դրամարկղներ բանալու աշխատեցան, ձայներնին և աղմուկնին օդն կը թնդացնէր, ոստիկանութիւնն չէր միջամտեր: Բազմիցս յարձակեցան Խաւիար Խանի, Տէրիմէն Խանի, և Եէնի Խանի վրայ, սակայն չյաջողեցան բանալ: Ամբոխն կ'աղաղակէր բացէք դռներն մենք միայն Հայ կուգեմք: Առաւօտուն պահ մը ամբոխն հեռացաւ և ես ապաստանարանս թողուցի:» Հարկ է գիտել տալ թէ այս խաներու բնակչութիւնն աւելի Եւրոպացի և Յոյն է քան Հայ:

ԳԱՍՄ-ՓՆՇԱՅ: Բիւրտերու ստուար խուժան մը յարձակած է տեղական Հայ խաներու վրայ շատ կոտորած ըրած է, ապա անցած են Փափազ Բէօիբիւ և իրենց կոտորածն ընելով հասած են մինչև Բանկալթի:

ՍՏԱՄՊՈԼԻ կողմն ահուելի եղած է ջարդն, հնար չէ լուր առնել:

ԿԱԼԱԹԻՈՅ ՄԱԲՍԻ Հայ բեռնակիրները սպաննուած են Թօփհանէի Թուրք բեռնակիրներէն:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ փակ են ոստիկանութեան միջոցաւ որպէս զի Հայք Հապատանին անդ:

ԾՈՎ

ՅԱԻԱԼԻ ԱՐԿԱՅ ՄԸ: Պր. Հայկ. Յովսէփեան, Նիւ Եորքցի Հայ երիտասարդ մը, յարձակում կրելով 29դ փողոցին մէջ, մէկ աչքն փնասուած է, գուցէ պիտի կուրանայ: Այժմ Պէլվի հիւանդանոցում կը դարմանուի:

ՆԱՄԱԿ ԱՏԱՆԱՅԷՆ

Ատանայ, Օգ. 10, 1896

Քառասուն օր առաջ աստ հասնող կուսակալի փոխ Սուրուրու Պէյ մեկնեցաւ աստի ի նոր պաշտօնատեղին Ռօտոս, որոյ արդի կուսակալն է ծանօթ Ապէտտին փաշան: Սուրուրի Պէյի քառասնօրեայ կեանքին վերայ եթէ ակնարկ մը ձգեմք՝ ըստ բաւականին շրացուցիչ են: Տխմար կուսակալն հարուածեց շատ մը ձեռնարկներ ի մէջ և պախառակեց կաշառակուլ պաշտօնէից ընթացքը:

Անցեալ օր աքսորեցին դէպ ի Պոլիս Ալի փաշայի ազատական որդին, որն որ Կիպրոս բռնուած էր քանի մը օրեր առաջ: Նմա կ'ընկերանայ Հայ սարկաւազ մը որոյ ո՞վ և ու՞տի գալն մեզ կը մնայ տակուին անծանօթ:

Բանտային դժընդագոյն կացութիւնը օր քան զօր կը վատթարանայ. ծեծ, անարգանք, հայհոյութիւն անպակաս է. թուրքիւն աղքատ դասակարգին համար իսկ ունեւորք իրենց ընտանեաց կողմէն կը խնամուին անուղղակի կերպով: Անկուռ երիտասարդ Կարապետ Էֆ. Կէօյտէրջեան որ եւեթ «Հայ» լինելու յանցանքով քանի մը ամիսներէ ի վեր բանտը կը չարչարուի, կառավարութեան բռնած ընթացքէն կը վախցուի այդ երիտասարդի մասին:

Գաղթային կորստաբեր հոռանքն վերսկսաւ: Գունդագունդ երիտասարդներ և երիտասարդուհիներ կ'երթան դէպ ի Գողումպեան աշխարհն, կառավարութեան յայտնի սակարկող Սէլիմ Էֆէնտի անուն մի աքսորեալ Արաբ, անձի գլուխ 3 օսմանեան ոսկի առնլով՝ անցագրի դիւրութիւն կ'ընծայէ:

Ամսոյս 12ին աստ եկաւ Ստեփաննոս եկեղեցիի ինքնընտիր կաթողիկոս Յովհ. Գազանճեան հանդերձ իւր արբանեկօք: Ժողովուրդն նախ ընդդիմացաւ և կառավարութեան թագրի մը սրուեցաւ «Ժողովուրդը բանադրուած կղեր մը չուզեր պահել եկեղեցւոյ» իմաստով: Պատասխանն խուսափական եղաւ: Եթէ չկաթողիկոսն ուզէ երկար կենալ, ժողովուրդն պատրաստ է անել մի ցոյց որոյ ելքն գուցէ ցաւալի միջադէպի մը հանգի:

Մէրսինու Գաղղիական հիւպատոսն

մեկնեցաւ, ամսականի յաւելմամբ մը: Սոյն անձնաւորութեան մեկնմամբ Ատանացիք մեծ կորուստ մ'ունեցան, քանզի աննկուն և վեհանձն անձնաւորութիւն մ'էր յիշեալն և միանգամայն կարի գործունեայ:

Մարաշ, Այնթապ, Եդեսիա, Քարբերդ, Մալաթիա և այլ աւերեալ տեղերէ գունդադուռն կը գլխին աւա որբ մնացած աղջիկ, մանուկ և երիտասարդ, մինչ երեկոյ անգործ, անվաստակ կ'երթեկեն: Արդէն երկիրն այնքան առւարական տաղնապի մէջ է որ տեղացւոց շատեր յետին ծայր չքաւորութեան մատնուած են:

Այսօր Յարութիւն անուն ջրկիր հայ մը կը վիրաւորուի ի Գալէ Գաբու. երբ ճամբան կուժ յուսն կուգար, Թրքեր կը հրաւիրեն զայն ամենայն աներեսութեամբ ընդունիլ Թրքական կրօնն: Հայն կը պատասխանէ որ առ այժմ իւր կրօնէն գոհ է, կսկսին անխնայ 4—5 տեղէ դաշտնել: Բօլխներն պէտք եղած ձեւակերպութիւններն կ'ընեն—այլ սակայն առանց ձերբակալութեան:

Ա. ՊԱՐՈՅՐ

ՄԵՐ ՆԵՐԿԱՅ ԱՌԻԹՆ

ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Միացեալ Նահանգաց ընտրութիւնք այս Նոյեմբերին ընտիր առիթ կ'ընծայեն Ամերիկացի Հայերու օգտուիլ և ցուցնել թէ մինչ իսկ Ամերիկայում կան հայ քաղաքացիներ որք կը պահանջեն ճանաչումն և որոց շահերն պարտին հոգացուիլ որպէս այլ ամերիկեան քաղաքացիներու:

Ժողովրդապետական մի երկրում անոնց շահերը կը պաշտպանուին լաւագոյնըս, որոնք ունին ձայն և քուէ և որք կարող են իրենց ձայնի և քուէից տալ շատ ազդուութիւնն՝ զայնս կազմակերպելով և ըստ պատշաճին գործածելով:

Որպէս զի այս ձայն ունենայ մեծագոյն ազդուութիւն պարտ է, նախ, զայն կազմակերպել և, երկրորդ, ըստ պատշաճին գործածել:

Եթէ ամեն Հայ անհատ իրեն քուէն տայ առանձին, այդ բոլորովին կը կորսնցնէ իւր զօրութիւն նպաստելու Հայ-Ամերիկացւոց մասնաւոր շահուց, բնաւ նշա-

նակութիւն չունենար այս տեսակէտով, և չի հրաւիրեր ուշադրութիւն Հայ-քաղաքացւոյն մասնաւոր պահանջից: Այդ կը լինի պարզապէս քուէներն դուրս նետել իրրեւ անպիտան բան, մանաւանդ որ Հայերս դեռ այնքան հաստատուած չենք Հոս որ տիրող խնդիրներն մեզ զգալապէս և ուղղակի ազդեն: Սակայն եթէ ամեն տեղ ուր կան հայ քաղաքացիներ կազմուի մի քաղաքական «գլըպ», Ժողովներ ունենան, տեսակցին կառավարական թիկնածուներու կամ առաջնորդներու Հետ և այսպէս յայտարարուի թէ իրենք են մի զօրութիւն և թէ իրենց մասնաւոր պահանջք պարտին նկատի առնուիլ, յայնժամ մեր քուէն կ'ունենայ բոլոր արդիւնքն և զօրութիւն զոր այն կարող էր արտադրել:

Զօրութիւնն կեդրոնացնել և կազմակերպել շատ կարեւոր է, սակայն այդ զօրութեան ուղղութիւնն և գործածութիւնն ոչինչ նուազ կարեւոր է: Ո՞ր թիկնածուն տալու եմք մեր Հաւաքական քուէներն: Այս հարցման պատասխանելու համար մեք նկատելու ենք թէ ո՞րն մեզ նպաստաւոր դիրք բռնած է արդէն և թէ ո՞րն է Հաւանաբար յաջող կողմն: Ոչ որ կրնայ տարակուսիլ թէ Ամերիկայի յաջորդ նախագահն պիտի լինի կա'մ Վիլեամ Ճէնինկս Պրաեան, կա'մ Վիլեամ Մըք Բինլի: Ուրեմն մեր Հաւաքական քուէն արուելու է այն Վիլեամի որոյ ընտրութիւնն աւելի հաւանական է և աւելինընդապաստաւոր Հայ ամերիկացւոց մասնաւոր շահուց: Անշուշտ ինձ անհնար է Հոս բացատրել թէ ինչու կը հաւատամ թէ Վիլեամ Մըք Բինլիի ընտրութիւնն գրեթէ ոտոյգ է: Արեւելեան կոչուած նահանգներըն ոտոյգ Մըք Բինլիի կողմն են, և վերջին նահանգային ընտրութիւնք վէրսոնթում և Մէյնում կը ցուցնեն թէ գեղջուկ պիտի չնպաստեն Պրաեանի որպէս ոմանք կ'ակնկալէին և թէ Մըք Բինլի պիտի չահի բաւական քուէ թէ յԱրեւմտեան և թէ միջին նահանգներում որով ապահովուի իւր ընտրութիւն Նոյեմբերին: Նոյնպէս կայ Հայ-Ամերիկացի մը որ զայրութիւն չնայի Գլիվլէնտի տկար և երբեմն հակահայ քաղաքականութեան: Ընդհակառակն Ռէբուպլիքանք, որոց թիկնածուն է Մըք Բինլի, միշտ պարսաւած են Գլիվլէնտի անտարբերութիւնն մեր իրա-

ւանց Թուրքիայում և իրենց կուսակցական յայտագիրն ոչ թէ զօրաւոր արտաքին քաղաքականութիւն կը պահանջէ այլ մասնաւորապէս կը խոստանայ մեր շահերը պաշտպանել: Ես անձամբ տեսնուած եմ Վիլհամ Մըքֆինլիի հետ: Շատ ազնուասիրտ անձ մ'է և Հայոց համակիր: «Աշխարհ զայրացած է այս բարբարոսութեանց դէմ և յուսամ Տէրութիւնք պիտի անեն բան մը զանոնք դադրեցնելու» ասաց ինձ, երբ իրեն նուիրեցի մի գիրք Հայոց վրայ: Ուստի, որովհետեւ Տէմօքրաթը անտարբեր եղած են մեզ, որովհետեւ զմեզ չլիջեցին անգամ իրենց յայտագրում, որովհետեւ հաւանաբար ամենէն ոարսափելի պարտութիւնը պիտի կրեն Նոյեմբերին, որովհետեւ Ռէքուպլիքանք միշտ եղած են մեզ համակիր, կը խոստանան մեր շահերը պաշտպանել, ունին այս անգամ բոլոր ազգեցիկ և մեծ արանց աջակցութիւնն և պիտի յաջողին, հարկ է որ ամեն Հայ տայ իւր քուէն հաւաքարար Վիլհամ Մըքֆինլիի:

Թող ամեն քաղաքում կազմուին «Armenian McKinley Club» (Հայոց Մըքֆինլիեան խումբ) և Նոյեմբերի երրորդում ամեն Հայ քաղաքացի թող տայ իւր քուէն մեր Բարեկամին, Վիլհամ Մըքֆինլիի:

Նիւ Եորք, Սեպտ. 18, 1896 Ս. Գ. ՔէՊԱՊԵԱՆ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ

ՏՐԱՄԱԽՈՂՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԸ

«Հանդէսը» հազիւ սկսուած վիճաբանութիւն մը շուտով փակել ուզեց և փակուած կը հրատարակէ զայն: Իւր բաղձանաց կը համակերպինք: Կը թողունք որ իրեն վերապահէ գաղտնիքները— թէ ինչպէս սահման կը դժէ լեզուի օրինաւոր շրջափոխութեան և մերժելի աղաւաղութեան միջև— և թէ ինչ են իւր աշխարհաբարի տարբերութիւններն պոլսականէն: Այսպիսի լուրջ խնդրոց քննութեան քանի մը սող, և քանի մը տողի վրայ «Քանի մը յաւելուած» կը նուիրէ, որք զխնդիրն ոչ քննելու այլ քննացնելու կը ջանան:

Քանի որ այդպէս է, վերջ տանք վիճաբանութեանը, բայց նախ քանի մը տողով ցուցնենք Հանդիսին տրամաբանական թերութիւններն, որք աւելի ծանրակշիռ են քան իւր լեզուական սխալներն:

Ահաւասիկ ինչ կը գրէ «Հանդէսն» «Փակուած վիճաբանութեան մը վրայ քանի մը յաւելուած»ով. —

«Քանի որ,» կ'ասէ Հանդէսն, շօշափելով ՀԱՅ ՔԻ (Օգ. Թուոյ) երկայն քննադատութիւնը, «Քանի որ մատնացոյց ըրած Թերութիւններն,— որ շատ խնդրական կը մնան— ընդհանուր աշխարհաբարին կը վերաբերին՝ ըստ Պր. Յօդուածագրին, կը զարմանանք թէ ինչպէս ընդհանուր լեզուին կարծեցեալ թերութեանցը համար պատասխանատու կ'ուզէ ճանչնալ զՀանդէս Ամսօրեայն Պր. Յօդուածագիրը:» (Հանդ. Ամս., Սեպտ. 1896:)

Մեք ալ կը զարմանանք, յարգելի Հանդէս, որ դուք մոռնալ կը ձեւանաք զբուն խնդիրն: Ի՞նչ էր ՀԱՅ ՔԻ դիտողութիւնը ի սկզբանէ, եթէ ոչ այն իսկ՝ թէ Վիեննական Դպրոցը որդեգրած էր զՊոլսական գրաւոր Հայերէնն՝ նորա թերութիւններով հանդերձ: Յիշեցէ՛ք ասոր ընդդէմ ձեր բողոքն ալ, թէ «Վիեննական Դպրոցը համաձայն չէ երբեք պոլսեան աշխարհաբարին:» (Հանդ. Ամս. Փետր. 1896:)

Այդ բողոքին վրայ հարկ եղաւ մեզ մատնացոյց անել պոլսական գրաւոր Հայերէնին թերութիւններն Հանդէս Ամսօրեայի լեզուին մէջ: (Հայք, Օգ. 1896:)

Մեք կը սպասէինք որ Հանդէսն, պատասխանելով մեր քննադատութեան, ցուցնէր թէ թերութիւններն զորս մատնանիչ արած էինք Հանդէս Ամսօրեայի վրայ, չեն թերութիւն: Ապշեցանք, սակայն, կարգաւոր իւր պատասխանը, որ փոխանակ «խնդրական» եղող թերութիւններուն խնդիրը քննելու, պարզապէս կ'ասէ թէ Հանդէսը պատասխանատու չէ պոլսական գրաւոր Հայերէնին թերութեանցը համար: Այս է, ըստ մեզ, Հանդէս Ամսօրեայի կողմէն փախուստ մը խնդրոյն դժուարութեանէն, և տրամաբանական տկարութեամբ փախուստ մը:

Տրամախոհական ոչ նուազ տկարութիւն կը ցուցնէ Հանդէսն արմատական և ոչ-արմատական այբերու սղման խընդրոյն մէջ ալ: Մեք ասած էինք թէ արմատական այբը չի սղիւ հայերէնի մէջ, ինչ-

պէս կը սղի ոչ արմատականը: Հանդէսն, ի պատասխանի, քանի մը օրինակով կը ցուցնէր թէ արմատական այբն ալ կը սըղի աշխարհաբարին մէջ, ինչպէս ունինք կար-էն կրնալ և անկ-էն իյնալ: Եւ մեք ցոյց տուինք (Օգ. թուով) թէ ինչու այդպիսի բացառութիւնք չեն արդարացներ արմատական այբի ամեն սղումներն, մասնաւորապէս ըսեմ և ընեմ ձևերը, որք պէտք է անեմ և ասեմ գրուին:

Սակայն Հանդէս Ամսօրեայի տրամաբանական մեծագոյն սխալը յայնմ չէ թէ քանի մը բացառութիւններու ուժով կանոն մը ջրել կ'ուզէ, այլ յայնմ՝ որ ինքը կը կարծէ կարենալ հետեւցնել թէ մեք, որ արմատական այբերն յարգել կ'ուզենք աշխարհաբարի մէջ, ստիպուած կը լինինք, իբրեւ դորա հետևանք, ոչ-արմատականներն ալ անխտիր յարգել: Եւ Հանդէսն այբերով ծանրաբեռնուած հետեւեալ խօսքը կը խոթէ մեր բերանը, իբրեւ անհամ օրինակ մը մեր առաջարկած հայերէնին. — «Բարեկամս կը մեռանէր... պիտի հառանէի և տեսանէի զինքը... եթէ կենդանի գտանէի, պիտի ճանաչէր զիս»: Դիտեցէք, եթէ կը հաճիք, սիրելի Հանդէս, որ ձեր կարկառեալ օրինակին մէջ «պիտի տեսանէի, եթէ գտանէի» և այլն բառերու ստորագծեալ այբերը արմատական չեն այլ ածանցական մասնկաց են, որոց նկատմամբ մեք երբէք չենք առած թէ սղել օրէն չէ:

Կ'արժէր որ Հանդէսին «քանի մը յաւելուած»-ին ուրիշ կետերուն ալ պատասխանէինք, սակայն քանի որ վիճաբանութիւնը փակելու այնքան ջերմապէս կը փափաքի, չենք ուզեր աւելի նեղել զինքը:

Հանդէս Ամսօրեայն, վիեննական Մըխիթարեանց այդ հռչակաւոր բերանը, չափ սղտիկ բացուեցաւ ամեն անգամ որ ՀԱՅՔի պատասխանելու յուշնութիւնը յանձն առաւ, բայց այդքանն ալ բաւեց իւր ակռաները համրել տալու:

Ոչ ինչ այնքան քաջ կը ծառայէ պարբերական հրատարակութեան մը բարոյական բնաւորութիւնը երևան հանելու որքան վիճաբանութիւնը:

Քիչ մը աւելի տրամաբանական խնստութիւն և քիչ մը նուազ անքաղաքավար վարմունք — առոնք են Ամսօրեայ Հանդիսին անմիջական պիտոյքը:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Օգոստոս 29 — Պանքային զարհուրեալ պաշտօնեանը 10,000 լիրա սեղանին վերայ թողած էին, յարձակող Հայոց առջեւ, որք սակայն ամենեւին չգլան սոկինք-րուն, այլ, խոստովանինք ի պատիւ իրենց, օգնեցին իսկ արկղակալին որ արկղամուրին մէջ դնէ զայն և կղպէ:

Օգ. 29 — Պէտլինի Թակապլաթի թըղ-թակիցը կը հեռագրէ որ, եթէ ստորին դասերուն զինուորումը բրերով, յորում ոստիկանութիւնը օգնեց, արգիլուէր ի կանուխ ժամու, արիւնհեղութիւնը համեմատաբար շատ պիտի սահմանափակուէր: Եւրոպացիք իրենց տուները քաշուեցան և մահաճններուն մէջ կանխաւ մթերուած պաշարովը ապրեցան:

Օգ. 29 — Հայ Յեղափոխական Յանձնախումբը ուրիշ յայտարարութիւն մ'ալ հաներ է, յորում 12 պահանջներ բանաձեռած են, որոց գլխաւորը այն է որ Հայոց մէկ գաւառին կասարեալ ինքնօրինութիւն տրուի: Պահանջները թուելէ յետոյ՝ յայտարարութիւնը կը ծանուցանէ թէ Հայք իրենց իրաւանց համար պիտի մարտնչին մինչև որ իրենց վերջին անձը սպաննուի:

Իբր 2,000 կը հաշուեն չորեքարթի աւուր խռովութեանց առնն սպաննուածներուն թիւը: Ֆռանսական գործակատարը 500 դիակ համրեր է միայն մէկ դերեզմանատան մէջ: Տէրութիւնք հաւաքական ծանուցագիր մը յղելով Սուլթանին՝ բողոքած են ջարդերուն դէմ:

Հարիւրաւոր մարդիկ ծովեզրը կը դիմեն՝ ապաստանելու համար օտար նաւերու:

Օգ. 30 — Երէկ գիշեր գնտակներ արձակուեցան և ուռմբեր պայթեցան ի կալաթա: Ռումելի նետուեցան նոյնպէս Գրեզտի Լիօնէ և Ծխախտի Ռէթի պաշտօնատներուն:

Երէկ օտար դիւանագէտը յետ երկարածիք խորհրդակցութեան, ուղղակի Սուլթանին յղեցին կորովաբան հեռագիր մը, որպէս զի վերջ տայ արհաւրաց տեղաբաններուն, որոց միջանկնքուն ակա-

նատես եղած էին այլ և այլ դեսպանատանց անդամներէն ոմանք:

Օգ. 30— Տէյլի Նիւզին կը հեռագրեն թէ Պանքան գրաւող հայ յեղափոդականները ասեր են Պրն. Պարքըրի, զոր պատանդ առեր էին նոքա՝ Վինսէնթի տեղը, թէ իրենք Մակեդոնիայէն եկած էին, և ծրագրած էին յարձակիլ Բ. Դրան և Պատրիարքարանի վրայ, օգը հանել Վոյվոտայի ոստիկանական պահականոցը և գրաւել զԳոէտի Լիօնէ, բայց դէպքերը դաժաւիժեալ էին Օսմանեան դրամատան մէջ:

Վիէննա, Օգ. 30— Հոս կասեն թէ Ռուսիա և Աւստրիա համաձայնութեան մ'են հասեր որով պիտի դիմադրեն Հայոց պահանջներուն և նեցուկ պիտի տան Սուլթանին իւր երկիրը անխռ պահելու:

Կ. Պոլսէն կը հեռագրեն Սեպտ. 15ին թէ Երիտասարդ Թրքաց կուսակցութիւնը յայտարարութիւններ կը փակցնէ քաղաքին ամեն կողմերն՝ գրգռելով ժողովուրդը գահընկէց անել զՍուլթանը: Լուրջ խռովութիւններ պիտի տեղի ունենան, կ'ասեն, շաքարէ մը: Գիշերայն զինուորական հին նաւերով կը տանին զՀայերն ի Սև ծով և, կը կարծուի թէ, ծովամոյն կ'անեն: Անգլիացի բնակեալք հեռագրած են առ Լորտ Սոլզպէրի ասելով թէ իրենց կեանքն ու ստացուածք ի վտանգի են: Ֆռանսական զաղութիւն ալ նմանօրինակ դիմում մ'արած է իւր կառավարութեան: Բրիտանական և Ֆռանսական նաւատորմիղներն այժմ մօտ են Տարտանէլի բերանին: Սուլթանը Ֆռանս փաշային հարցեր է թէ Տարտանէլի ամրութիւնք որքան կը զօրեն խափան լինիլ մարտանաւուց անցքին, և պատասխան ստացեր է թէ իբր կէս ժամ:

Միացեալ Նահանգաց Պանքրոֆթ մարտանաւիկն Սեպտ. 14ին Նիւ Եորքէն մեկնեցաւ դէպ ի Թուրքիա, ուր պիտի միանայ Միննիափոլիս և Մարպլէէտ մարտանաւուց: Նա պիտի ծառայէ իրեւ պահակ նաւ ի Կ. պոլիս: Սինսինատի մարտանաւն ալ, հաւանականօրէն, ի Թրքական ջրերն պիտի յղուի քանի մ'օրէն:

ԿՈՏՈՐԱԾ ՅԱԿՆ

Կ. Պոլսէն Սեպտ. 20 թուակիր հեռագիր մը կը գուժէ սարսափելի կոտորած մը որ յԱկն տեղի ունեցած է Սեպտ. ամսոյ 15ին և 16ին: Քուրդք արշաւած են ի քաղաքն, ջարդեր են քրիստոնեաներն և կողոպտեր ու այրեր տունները: Շատ Հայեր պրծեր են լեռը փախչելով: Թուրք կառավարութեան հաշուովը 600 է սպաննուածներուն թիւը, վերջահաս հեռագիր մը 1,000ի կը հանէ զայն:

Պէռլին, 24 Սեպտ.— Զիւրոֆ. Թումայեան, հայազգի, որ հակաթրքական ժողովներ կազմաւորելու համար հոս եկած էր, ոստիկանք արտաքսեցին քաղաքէն: Փրօֆէսորը երկար ատեն դատախօսած էր Անգլիայում:

Լիվրփուլում, Սեպտ. 24ին, հանրային սքանչանաց մեծադղորդ ցոյցերու մէջ, մեծ ծերունին Կլատոթօն խոսեցաւ Հայոց մասին: «Ներկայ շարժումն, ասաւ, խարխալ ունի մարդկութեան ընդարձակ հիմունքը և չէ ուղղուած Մահմետականաց դէմ, այլ թուրք պաշտօնէից դէմ, որոց խժոժութեանց ապացոյցներն արժանահաւատ, պաշտօնական տեղեկագիրներէ գիտենք: Այժմ, ինչպէս 1876ին, կոտորածի ոճրին վրայ կ'աւելցուի ուրացման անամօթութիւնը, որ պիտի շարունակէ ճիշդ այնքան որքան ատեն որ Եւրոպա յօժարի մտիկ անել: ... Կը կարծեմ թէ դեսպանաց շարունակեալ ներկայութիւնն ի Կ. Պոլիս է իբրեւ հաճութեան հաւատարմ մը Սուլթանին համար, որ այս կերպով իրենց դաշնակիցը ճանչցուած կը լինի:»

Մինչև Օգ. 30 Բրիտանական Հիւպատոսարանն ի Կ. Պոլիս 15 պահանջ ընդունած է բրիտանական հպատակներէ, որոց ստացուածքը աւարի առնուած կամ չիք նարձուած են:

Մանչէսթըր. Կարտիըն թերթին մէկ անգլիացի թղթակիցն կ'առաջարկէ որ Անգլիա Կիպրոս կղզին Հայոց տայ, և քանի մի նաւ յղելով բաղձացող Հայերն հոն տանի, և հոն հանրային շինութեանց վրայ աշխատցնէ զանոնք, Անգլիոյ ծախքով: Այս կերպով, կ'ասէ, Անգլիոյ և

Թուրքիոյ միջև եղած դաշնակցութիւնն օրինաւորապէս կը խզուի և միանգամայն Եւրոպա կը տեսնէ թէ Բրիտանիոյ շարժման զիտումն չէ անձնասիրական :

Նուպար փաշան 2,000 տոլար հանգանակներ է ի նպաստ Թուրքիոյ հայ տառապելոց :

Պարոյր, մեր կիլիկեան նոր թղթակիցը, լրաբեր նամակէն զատ կը յղէ նաև քաջալերական գիր մի, որմէ քանի մը տողեր կը գտնենք հոս իբրեւ ցուցիչ այն ահագին խանդավառութեանը որով մեր Բրիտանացիներ հայկական գաւառներէն կը դիտեն արտասահմանի Հայոց դոյզն գործերը :

«... Համակրական ներբողեաններէ ի զատ ինչ կրնամ ընել ձեզ, ո՛ր աննմանըդ Գ., որ ձեր բազմաշարժար եղբարց աղաղակն աշխարհին կը հռչակէք, և որ այդպիսի անզուգական հանդէս մը կը հըրատարակէք երկաթեայ հաստատամտութեամբ՝ հակառակ ՀԱՅՈՑ երկաթեայ անտարբերութեան դէպ ի ՀԱՅՔ : Սակայն գոտեպնդեցէ՛ք, քաջալերուեցէ՛ք, բարե՛կամ, յաջողութիւնը ի մօտոյ պիտի պսակէ ձեր քրտնաթոր ճակատ, որն որ քաջ գիտցաւ խորհիլ ու գործել ի նպաստ Հայուն...»

Նորընտիր պատրիարքական տեղապահ Բարդուղիմէոս, Սուլթանին ներկայացած ատեն նուաստ ուղերձ մ'է արեւ, որոյ մէկ կտորը անգլիերէն թերթերուն մէջ ալ երևցաւ : Այդ գորչելի խօսքերուն ամենադարչելի վերջաբանը հետեւեալն է— «Եթէ յաջողիմ ես Ձեր վեհափառութեան բարեհաճութիւնը վաստկիլ, պիտի նկատեմ զայն ամենամեծ պատիւը և ամենամեծ երջանկութիւնը թէ ներկայիս և թէ հանդերձեալ աշխարհին մէջ :»

ՏԵՂԱԿԱՆ

ՏՐ. ՔՈՍՏԻԿԵՍՆԻ մահուան առաջին տարեդարձին առթիւ կրօնական պաշտօն կատարուեցաւ Քէլվըրի եպ. եկեղեցւոյն մէջ Սեպտ. 13ին, կիրակի օրն : Յիշեալ բժ. ժիշկը յոյժ յարգելի յիշատակ մը թողուցած էր Սերաստիոյ Նահանգին մէջ իբրև անձնուէր և անխոնջ բարեկամ աղքատ

տաց : Պատուելիք Յակոբեան և Հայկունի, ինչպէս և եղեղեցւոյն հովիւ Տէր Էմբրի, պատշաճ ուղերձներով ի վեր հանեցին այս աղքատասէր բժշկին արժանիքը :

ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ Ն. ՄԵԼԻՔ, թողուով 25 օրեայ անդրանիկ դատրիկ մը անմայր, կնքեց իւր մահկանացուն Սեպտեմբեր 14ին, ի Պրուքլին : Յուդարկաւորոթեան պաշտօնը կատարուեցաւ ի Ս. Յակոբ եկեղեցւոյ և թաղումն ի Ս. խաչ Գերեզմանատան : Խուռն բազմութիւն ներկայ էր ամերիկացի թէ հայ, և ազնուարարոյ և շնորհալի այս ամուսնւոյ կորուստը ամենքը ողբացին ի սրտէ :

Անոնք որ կ'ուզեն այնպիսի ճաշարան մը յաճախել ուր երեք տեսակ համեղ կերակուր ուտել կարենան 25 սէնթ միայն վճարելով, կրնան երթալ ի Թիւ (112 W. 21 St.) 112 արեւմուտք 21դ փողոցը, Վեցերորդ Էվինիւի մօտ : Այս ճաշարանին աթանութեան գաղտնիքը այն է որ Ֆռանոսցւոյ Երիտասարդական Քր. Ընկերութիւնը ճաշատան վարձքը իւր վրայ առած է, պայմանաւ որ խոհարարապետը այս ինչ չափաւոր գնով տայ այն ինչ կերակուրները : Նախաճաշ ժամ 7էն 8.30, (15 սէնթ) : Կէս աւուր ճաշ ժամ 12էն 1½, ընթրիք ժամ 6էն 7.30 : Կան նաև վարձու կահաւորեալ սենեակներ, շաբաթն 2 տոլարէն մինչև 7 տոլարի :

ՀԱՅ ԽՈՀԱՐԱՐՈՒԹԻՒՆ մը, որ ամերիկացւոց քով խոհարարութիւն ըրած է, կուղէ գործել հայ ընտանեաց մէջ :

Հասցէ— Գրիգոր Շահպաղեան,

99 Pearl St.,

Malden, Mass.

LANTELME'S RESTAURANT

40 Union Square

ՆԻՒ ԵՈՐՔ ՔԱՂԱՔՈՒՄ

Այս ճաշարանը միջին կարգի քսակներու համար ամենայարմարն է, վասն զի Ֆռանսական ճարտարութեամբ կը պատրաստուին պատուական կերակուրներ : Կէս աւուր ճաշը 40 սէնթ, երեկոյեանը՝ 75 : Գինին պարունակեալ է : Ամերիկացւոց ճաշարաններուն մէջ այս աստիճանի լաւ ճաշի մը համար, գոնէ կրկնապատիւ կը վճարելու է :

Հասցէ

Editor of "HAIK" 341 West 23d St.,
NEW YORK,
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգրին է
ամեն երկրաց Համար
երկու տալեր կամ տասն Փրանք
Կանխիկ

ԲԱՑՈՒԱԾ է

“ՀԱՅՔԻ”

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1897

ԹՈՒԱԿԱՆԻՆ

Անոնք որ հիմա կը վճարեն, կ'ընդունին այս տարուան նոյն Դեկտեմբերի թիւը:

Կը խնդրենք մեր բարեկամներէն, Համակրողներէն, աջակիցներէն, պատուական գործակալներէն մատուցուող և փոխհաշուանդն հոգածութիւն բաժանորդները շատցնելու:

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեան ըս դրամ յղողներն՝ Նիւ Յորքի փոստ օֆիսին Station B (Նոյ ճիւղ)ին ձեռքով զայն մեղ Հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ գիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

HISTORY OF THE ARMENIANS IN INDIA

From the earliest times to the present day,
by MESROB J. SETH

Armenian Examiner to the University
of Calcutta

190 էջ, Լաթակազմ: Գրին է 5 Փր. 50 յիւս.
Կանխիկ վճարելի:

Դիմել Հեղինակին Հետեւեալ Հասցէիւ.

11, Wellesley Square, E. Calcutta, India

ԺԱՄԱՆԱԳՐՈՐԾ

Պատիւ ունիմ ծանուցանելու թէ ճարտարապետ շոգեշարժ մեքենայից լինելով, կը զբաղիմ նաև ժամագործութեամբ երեկոյները ժամ 8էն մինչև 11 ժամացոյց նորոգելու:

Նաև կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ աժան գներով: Անոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խաբարայ Հրէյից և այլ ազգաց որք կրկնապատիկ գրին կը պահանջեն, կրնան գիմել մեր Հասցէին:

MISAK M. PHILIP,

89 Madison St., New York.

FACTS

ABOUT

ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է բնունն անգլիերէն տետրակին որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատարակուեցաւ:

Տեսարակն կը պարունակէ Կլատսթոնի մեծ ճառն խօսեցեալ ի Ձէսթըր, և Տիւօնի յօդուածն՝ Բօնթէմփորէրի Րիվիւէն արտատպուած: Այս յօդուած մինչև ցարդ Հայոց վերայ գրուածներուն ամենազօրաւորն և ամենակատարեալն է, զոր կարդացող օտարական մի, որքան ալ գուլխոյն տէր լինի կը կատարի թուրք հառավարութեան դէմ: Հայրենակիցք պէտք է փութան տարածել այս տետրակ օտարականաց մէջ:

Գին օրինակին է 20 սէնթ: Առ նուազն 50 օրինակ մէկէն գնողին կը արուի 15 սէնթէն:

Դիմել ՀԱՅՔԻ խմբագրատունն:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՐՈՐԾ

286, Դե. Էվինիու

Նիւ Լորք

26դ և 27դ. Փողոցներուն միջև

Դեղադրեր կը շինուին խնամով

ԵՐԿԵՍՈՒՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆԻ

(Այս գրքերն գնելու համար գրել կամ գիմել Հայքի խմբագրատունն:)

ԱՐՈՒԵՍՏ

ԱՅԵՆԱՐԾՈՒՐՔԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան: Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ: Քսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՁԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈՂՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ՉՕՐՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ՁԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք:

Գինն է 2ուկէս ֆրանք կամ 1 րուպլի (50 սէնթ): Ութածալ 120 երես: 1891

ԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՐՔԻՆ

ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական խնդիրն այլ ևս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական Հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է: Հետեւապէս հարցն այն չէ թէ կարօտ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարող եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իրրեւ ազգ: Զերկրաւոր թաղաւորութիւնն, ինչպէս գերկնաւորն, բոլորն յափշտակեմ: Արտաքին ճշմարիտ աշակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացունեմք: Ոչ թէ բան մ'անելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն:

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես: 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած:

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒՐՔԵԱՆ

ԱՅՅԵԱԼ և ՈՐ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերն պատմաբանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով Հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ Հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որդեգրեն որ կարենայ իրրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն:

Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 61 երես: 1888

ԱՅԵՆԱՐԾՈՒՐՔԻՆ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ԶԷՅՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐԷ, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ԶԱՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԴԻ, ՅԱՂՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔԻ ՈՒԺՈՎ: Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես: 1893

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱՆԱԿ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն Հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ: Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային իտէականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են:

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես: 1894

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով.
Ա. տարի, 1 տուար 50 սէնթ կամ 7.5 ֆր.
Բ. „ 2 „ կամ 10 ֆրանք:
Գ. „ 2 „ „ „ „
Դ. „ 2 „ „ „ „
Ե. „ 2 „ „ „ „

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն
Ի . Ս . Գ Ա Բ Ր Է Լ Ե Ա Ն